



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԹԻ ՈՒՄՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Մանուկներու եւ պատանիներու կրօնադաստիարակչական եւ հայեցի կրթութեան նուիրուած մեր Կիրակնօրեայ Դպրոցները կը վայելէն անվերապահ հոգածութիւնն ու հովանաւորութիւնը Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի: Կամաւոր եւ գիտակից ուսուցչական կազմերու խնամքին եւ հոգածութեան յանձնուած աշակերտութեան ամէն Կիրակի մեծ սիրով, համբերութեամբ եւ յանձնառութեամբ կ'ուսուցուին աւետարանական պատումներ եւ դրուագներ, սաղմոս, աղօթք, շարական, ինչպէս նաեւ կրօնական եւ եկեղեցագիտական ծանօթութիւն կը ջամբուի մեր նոր սերունդի զաւակներուն: Իսկ ուսուցչական կազմեր յաճախակի հանդիպումներով, միօրեայ կամ երկօրեայ դաստիարակչական բնոյթի հոգեշահ համագումարներ կը կազմակերպեն, նպատակ ունենալով ի մի խմբել մեր Թեմի եկեղեցիներու ուսուցչական կազմերը եւ անոնց փոխանցել անհրաժեշտ գիտելիք՝ հայ եկեղեցւոյ պատմութեան, դաւանաքին, տօնակարգին թէ եկեղեցագիտական նիւթերու մասին:

2007-08 ուսումնական տարեշրջանի դպրոցական վերամուտի առթիւ, նախաձեռնութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքին, Շաբաթ, 16 Սեպտեմբեր յետ միջօրեի ժամը 4:00-6:00, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ ուսուցչական կազմերու լսարան-հաւաք: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Հրանդ Զինյ. Երեցեան, Ս. Սարգիս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տեր Խորեն Զինյ. Պապօշեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան:

Հաւաքական աղօթքէ ետք, Տիար Յակոբ Չաղացպանեան, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի անունով բարի գալուստի իր խօսքին մէջ անդրադարձաւ Կիրակնօրեայ Դպրոցներու ճամբով հայ մանուկներու կրօնաբարոյական եւ հայեցի դաստիարակութեան նուիրուած մշակներու նուիրական դերին եւ առաքելութեան, եւ իր խօսքը եզրափակեց հոգելոյս Սահակ Խապայեան կաթողիկոսի 28 Յունիս, 1930 թուակիր հայրապետական կոնդակէն հատուածով մը, ուր կը կարդանք. «Մենք կ'ուզենք որ մեր մայրենի եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ընտանիքին, իրենց ազգին եւ իրենց եկեղեցւոյն: Չենք կրնար թոյլ տալ որ աս ու ան իր ուզած կերպով խաղայ մեր եկեղեցւոյն անուան

*հետ եւ մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս, չենք ուզեր որ անկրօն եւ սոգետ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը»:* Ապա Տիար Յակոբ Զաղացականեան հրաւիրեց ներկաները, որ այս մտածումներով գործօն մասնակցութիւն բերեն Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցչական կազմերու վերամուտի առթիւ կազմակերպուած խորհրդակցական լսարան-ժողովին:

Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայացուց Հայ Եկեղեցւոյ տօնախմբած եւ Քրիստոսի Ս. Խաչին նուիրուած Խաչվերացի, Գիւտ խաչի, Երեւման Խաչի եւ Վարազայ Խաչի տօները, անդրադառնալով անոնց պատմական, աստուածաբանական եւ այժմեական իմաստներուն եւ արժէքներուն: Հարց- պատասխանի բաժինէն եւ Խաչվերացի նուիրուած շարականի ուսուցումէն ետք, ժողովը ունկնդրեց Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչներուն զեկոյցները եւ 2007-08 ուսումնական տարեշրջանի աշխատանքային ամփոփ ծրագիրները:

Իսկ աշակերտական լսարանային բաժնի ուսումնական տարեշրջանի համար պատրաստուած Կիրակնօրեայ Դպրոցներու յատուկ տարեկան Ուղեցոյց Ծրագրի բաժնին մէջ արձանագրած նորութիւններէն յատկանշանական էր Ազգ. Առաջնորդարանի Կայքէջի Քրիստոնեական Դաստիարակութեան Կիրակնօրեայ Դպրոցներու բաժանմունքի վերաբերեալ տօներու, տաղաւարներու եւ այլ առիթներով երգուած շարականներու եւ երգերու եկեղեցւոյ Տօնակարգին հետեւողութեամբ ձայնաւոր արձանագրութիւնը, որուն գործնական ու թեքնիք ներկայացումը կատարեց Տիար Պերճ Ծամճեան: Ազգ. Առաջնորդարանի Կայքէջն է <http://www.westernprelacy.org/> **click on Christian Education; click on Hymns and songs for special occasions and feast days of the Arm. Apostolic Church Sunday Schools.**

Ներկայացուեցաւ եւ խորհրդակցութեան նիւթ եղան Կիրակնօրեայ Դպրոցներու 2007-08 ուսումնական տարեշրջանի կրթական, կազմակերպչական ծրագիրներն ու աշխատանքները: Եղան շինիչ թելադրութիւններ եւ գործնական առաջարկներ, զորս Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինը իր յառաջիկայ նիստերու ընթացքին պիտի քննարկէ եւ համապատասխան ծրագիրներ մշակէ, որոշումներ կայացնէ:

Հաւաքին եզրափակիչ խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատեց նման օգտակար հաւաքներ, որոնք առիթ կը ստեղծեն փոխադարձ փորձառութիւն ձեռք բերելու եւ կը նպատակադրեն խորացնելու մեր եկեղեցագիտական գիտելիքներն ու ծանօթութիւնները: Ինքնանպատակ չեն այս հաւաք-լսարանները, ոչ ալ ձեր ուսուցիչի ձեռք բերած իրագործում-գիտելիքներն ու փորձառութիւնները, ըսաւ Սրբազանը, այլ՝ պէտք է ծառայեն աշակերտներու հոգեւոր աճումին, կրօնական ու ազգային ժառանգութեանց փոխանցումին ու հայեցի առողջ նկարագրի կերտման, հասարակաց նպատակներուն եւ ճիգերու յաջողութեան: Այս նպատակաւ, Ազգ. Առաջնորդարանը եւ մեր Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ Հայր Սուրբերը ամեն ճիգ ու ջանք կը թափեն, որպէսզի կիրակնօրեայ դպրոցները, պատանեաց ու երիտասարդաց խումբերը համախմբեն մեր եկեղեցիներու հովանիին

ներքեւ, հաւաքներ ու յատուկ ծրագիրներ կը մշակեն, որպէսզի հասակ առնեն ու առաջնորդուին քրիստոնէական արժէքներով եւ մեր հայրերու հաւատքով սպառազինուին եւ հեռու մասն այլասերիչ, օտարամուտ ազդեցութիւններէ:

Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթանք քայլերգով եւ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով ու խմբային նկարով վերջ գտաւ միօրեայ հաւաքը:

## Ս. ՊԱՏԱՐԱԳ

Սոյն լսարան-հաւաքը զուգահիւսելով Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատուռէն ներս ամսական դրութեամբ տեղի ունեցող հերթական պատարագներուն՝ երեկոյեան ժամը 6:30-ին, Ս. եւ անմահ պատարագ մատուցուեցաւ: Պատարագիչն էր Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեցեան:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականաց, դպրաց եւ սարկաւազաց խումբը թափօր կազմած եւ Խաչվերաց տօնին նուիրուած շարականի երգեցողութեամբ մուտք գործեցին *»Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան«* սրահ, ուր Առաջնորդ Սրբազանը, օրուան Աւետարանի ընթերցումէն ետք հոգեւոր իր պատգամով անդրադարձաւ Վերացման Ս. Խաչի տօնի իմաստին ու խաչէն ճառագայթող փրկագործութեան խորհուրդին, բարութեան, ճշմարտութեան եւ լոյսի ծառայութեան: Օրուան ընթերցում Յովհաննէս Աւետարանիչի 3րդ գլուխի 13-21րդ համարներէն փոխ առնելով իր բառերը Սրբազանը ըսաւ. *«Հակառակ անոր որ լոյսը (Քրիստոս) աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար. սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն ու փառքին համար գործուած են»:* Մեր եկեղեցւոյ աշխատանքն ու ծառայութիւնը, ինչպէս նաեւ մեր Կիրակնօրեայ Դպրոցներու առաքելութիւնը Քրիստոս-Լոյսին մերձեցման աշխատանքն ու հաղորդակցութիւնն է, ըսաւ Սրբազանը, որպէսզի Քրիստոսի լոյսով պայծառակերպ՝ Նոյն Քրիստոս-Լոյսին, փրկութեան եւ ճշմարիտ գիտութեան առաջնորդէնք մեր մանուկներն ու պատանիները:

«Կիլիկիա» երգով ու «Մեր Հայրենիք» քայլերգով, երեկոյեան ժամը 7:30-ին, վերջ գտաւ Կիրակնօրեայ Դպրոցներու վերամուտի առթիւ կազմակերպուած ուսուցչական կազմերու հաւաքն ու եկեղեցական հոգեպարար արարողութիւնը:

Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչակազմեր՝ նոր գիտելիքներով եւ հոգեւոր ծանօթութիւններով հարստացած, գոհունակ մեկնեցան, վերահաստատելով իրենց յանձնառութիւնը եւ նուիրումը՝ իրենց խնամքին յանձնուած հայ մանուկներն ու պատանիները կրօնական եւ հայեցի առողջ կրթութեամբ դաստիարակելու, եւ նման շինիչ ու օգտակար հաւաքներ եւ առիթներ յաճախ կազմակերպելու:

Մ.Ծ.Վ.Ա.

## **SUNDAY SCHOOL SEMINAR FOR DIRECTORS AND TEACHERS**

On the afternoon of Saturday, September 15, a semi-annual seminar took place at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall for Sunday School directors and teachers, in preparation for the recommencement of classes which began the following day. The seminar was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the Prelacy Christian Education Department. The Prelate was in attendance along with Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Hrant Yeretjian, Pastor of Forty Martyrs Church, Rev. Khoren Babochian, Pastor of St. Sarkis Church, and Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary's Church.

The seminar began with the Lord's Prayer, followed by welcoming remarks by Mr. Hagop Tchagasspanian on behalf of the Sunday School Directorate. The first lecture was by Very Rev. Fr. Muron Aznikian who presented history and significance of the Feasts dedicated to the Holy Cross including the Exaltation, the Discovery, and the Apparition of the Holy Cross and the Feast of the Holy Cross of Varak. The lecture was followed by a question and answer session after which the directors each reported on the activities they have planned for the 2007-2008 school year.

To further assist students in their education, the Western Prelacy website was recently updated to include audio of hymns and songs for special occasions and feast days of the Armenian Church, which can be found on the Christian Education link of the website at [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org). This new feature was presented to the participants by Mr. Berdj Djamdjian.

The curriculum and other activities for the new school year were also discussed and suggestions were presented which the Directorate will analyze prior to implementation. Closing remarks were made by the Prelate who commended the organizing such a seminar which offers the chance for the exchange of ideas and experiences. The Prelate added that we must all serve towards the spiritual nourishment of our youth and pass on to them our religious and national traditions. The seminar concluded with the Prelate's benediction and a group picture.

### **DIVINE LITURGY**

Following the Sunday School seminar, Divine Liturgy was celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen chapel at 6:30 p.m. The celebrant was Rev. Hrant Yeretjian, Pastor of Forty Martyrs Church.

Following services, the Prelate, Clergy members, deacons, and choir headed in a procession to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where the Prelate delivered his spiritual message on the meaning of the Exaltation of the Holy Cross and the symbolism of the Holy Cross.

The evening concluded at 7:30 p.m. with the singing of "Giligia" and the national anthem of Armenia.